

յաթ-Նովայի տաղերից, ինչպես նաև նրան հղերված մի շարք բանաստեղծություններ:

Մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան հայ մեծ բանաստեղծի ծննդյան 250-ամյակը հանդիսավոր կերպով նշեց հոկտեմբերի 31-ին: Միությունների տան Սյունապարզ գահին էին հավաքվել Մոսկվաի հասարակայնության ներհայացուցիչներ, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գրողների պատվիրակությունները, Ռուսաստանի, Սկրաինայի և Մոսկվայի Միություն մյուս սեպուրյիկաների գրողների ու արվեստագետների ներկայացուցիչները:

Հանդիսավոր երեկոն բացեց ՍՍՏՄ գրողների միության վարչության քարտուղար Ա. Սուրկովը: Այնուհետև բնօրինակ խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նախագահ, ակադեմիկոս գրող Ն. Տիխոնովի հասր: «Սայաթ-Նովա», դա ժողովուրդների սիրո ու բարեկամության երգչի անունն է,—ասված էր հետոսմ,—և այն, որ այսօր նրա անունն արտասանվում է բովանդակ աշխարհում, արդարացի է ու բերկրային... Սայաթ-Նովան մեր առջև հասնում է իր ամբողջ փայլով՝ ժամանակը չի նսեմացրել նրա բանաստեղծությունների երանգները: Նա եղել է և մնում է պատկերավորության լուրջ ներբերանգներով փայլող բանաստեղծության, երաժշտական, քննարկ և հեշեղ բանաստեղծության շղերազանցված վարպետը... Սայաթ-Նովան, որը ժողովրդի այն-

քան շատ տառապանքների, ավերածությունների, բռնակալների խոզմությունների ականատես է եղել, ինքը խաղաղության ու խաղաղ աշխատանքի մարդ էր: Եստ հանապարհներ է անցել բանաստեղծը, բայց դրանք երգչի կյանքի հետ իրենց վախճանը չգտան: Նա և իր երգերը չըշխեցին ամբողջ աշխարհով մեկ, որովհետև բանաստեղծը գտել է գեղի մարդու սիրտը ամենուր շրջափառ ուղին: Սատի մենք մեծարում ենք նրան այսօր և ամբողջ հոգով ասում՝ «Փառք ու պատիվ ժողովուրդների բարեկամության երգչին, մարդկային սրտի երգչին, մեր հրաշայի բարեկամ ու հավերժական ուղեկից Սայաթ-Նովային»:

Այնուհետև ելույթ ունեցան գրականագետ Ս. Հարությունյանը՝ Հայաստանից, Սկրաինայի ներկայացուցիչ Իվան Լեն, Ադրբեջանի ժողովրդական գրող Միրզա Իրրահիմովը, Վրաստանի պատվիրակ, գրականագետ Գ. Բարամի-Անու Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի բանաստեղծները, Մարգարանիչներն ու արտիստները արտասանեցին անմահ քննարկուրի սանգիդադործություններից:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի հոբելյանական հանդեսները վերածվեցին ժողովուրդների բարեկամության և կույտության խնկական տանի:

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ Հայաստանում լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, ժողովածուներ, ուսումնասիրություններ և մենագրություններ, որոնք սայաթնովագիտությունը հարստադրին նոր տվածներով:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Խաղեր (Ըմանահանություն), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, 144 էջ: Սայաթ-Նովայի հայտնի «Դավթար»-ի նմանահանությունն է: Այս «Դավթար»-ը մինչև իր վերջին հանգրվանը՝ գրականության և արվեստի թանգարան հասնելը, երկար ճանապարհ է անցել: Գեղի Վրաստան Աղա Մահմեդ խանի կատարած արշավանքի նախօրյակին Սայաթ-Նովայի ընտանիքը իր հետ այն տանում է Սոզոկ, հետագայում ձեռագիրն անցնում է երգչի թոռան՝ Մովսես Սայաթյանի ձեռքը: Բժիշկ Հովհաննես Պոնդո անը վերջինիս մոտ տեսնելով «Դավթար»-ը՝ այն վերցնում ու հանձնում է Սայաթ-Նովայի առաջին հայտնագործողին՝ Գեորգ Ախվերդյանին, որը քրոնաչան ու

համառ աշխատանքից հետո վերձանում է «Դավթար»-ի հայերեն խաղերը և բանասիրական արժեքավոր ուսումնասիրությամբ 1852 թ. լույս բնծայում Մոսկվայում, Ա. Նուհետև «Դավթար»-ը նորից հանձնվում է Մովսես Սայաթյանին, որի մահից հետո այն անցնում է վերջինիս որդուն՝ Բագրատին: 1913 թ. նա «Դավթար»-ը հանձնում է հայ գրողների կովկասյան ընկերությանը: Մինչև 1921 թ. «Դավթար»-ը գտնվում էր այդ ընկերության նախագահի՝ Հովհ. Թումանյանի մոտ: Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայ գրողների կովկասյան ընկերության վարչության որոշմամբ այն հանձնվում է Հայկական ՍՍՌ կույտուր-պատմական թանգարանին:

Նախաձեռնելով Սայաթ-Նովայի խաղերի հիմնական ինքնագիր ժողովածուի լույս բնծայումը, Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը նպատակ է ունեցել գիտական լայն շրջանառության մեջ դնել այն և գրանով իսկ հեշտացնել մեծ բանաստեղծի ժառանգությունը:

ուսումնասիրելու աշխատանքը Սակայն միայն այդ նպատակի իրականացումը չէ, որ արժեքավոր է դարձնում «Դավթար»-ի հրատարակումը։ Այստեղ ավելի կարևորը ձեռագիրն իսպառ ոչնչացումից փրկելու հանգամանքն է։ Այլևս հարկ չի լինի, որ ամեն մի ուսումնասիրող ձեռքը վերցնի ձեռագիր «Դավթար»-ը, այն արդեն բազմացված է և, պետք է ասել, ավելի ընթերցանելի է, քան բուն ձեռագիրը, որովհետև պիտի տպագրության պատրաստողները՝ Բ. Չուգասզյանը և Պ. Մուրադյանը, գիտությունների ակադեմիայի տպարանի վարպետ Ս. Գյուլդինյանի անմիջական մասնակցությամբ զգալի աշխատանք են կատարել նմանահանությունը բարձրորակ դարձնելու համար։

Հովհ. ԽՈՒՐԱԿՅԱՆ, Սայաթ-Նովա, հոգվածներ և ճառեր, Հայկական ՍՍԽ ԳԱ հրատարակություն, 1963, 100 էջ։ Գիրքը 1945 թ. Ն. Թումանյանի կազմած ժողովածուի վերահրատարակումն է՝ որոշ լրացումներով ու ճշտումներով։ Գրքին կցված է Ա. Ինձիկյանի «Մեծ բանաստեղծների հոգեկցությունը» խորագրով առաջարկները։

Հայտնի է, որ Հովհ. Թումանյանն իր գրական գործունեության մի զգալի մասը նվիրել է Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը և գնահատմանը։ Բանասերները նրան, Գեորգ Ախվերդյանից հետո, իրավամբ համարում են մեծ գուսան-բանաստեղծի երկրորդ հայտնագործողը. սայաթնովագիտությունը շատ բանով է պարտական Հովհ. Թումանյանին։ Նա իր «Երկու մեծ թիֆլիսցիներ», «Սայաթ-Նովա ի երգերի բնավորությունը», «Նազաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը», «Քուչակ Նահապետի և Սայաթ-Նովայի ոուսերեն թարգմանությունների առիթով», «Սայաթ-Նովան—Դավիթ եպիսկոպոս», «Նյութեր, գիտություններ Սայաթ-Նովայի մասին» և այլ հոդվածներով, ուսումնասիրություններով ու ծանոթով, որ տեղ են գտել ժողովածուում, շատ կողմերով օժանդակել է հայ հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության բազմակողմանի լուսարանմանը։

«Սայաթ-Նովան Վ. Յա. Բրյուսովի բարգմանությամբ» (ռուսերեն-հայերեն), Հայկական ՍՍԽ ԳԱ հրատարակություն, 1963, 48 էջ։ Հայտնի է, որ Բրյուսովի գործունեությունը որպես հայ պոեզիայի հիանալի թարգմանիչ և ուսումնասիրող։ Բրյուսովի նախաձեռնությամբ հրատարակված «Издания Армени» անթոլոգիայում և ղեռ ավելի վաղ «Русская мысль» ամսագրում (1915, № 9) լույս էին տեսել ուսու ականավոր բանաստեղծի թարգմանությունները Սայաթ-Նովայից և նրա խոր

բութադիրը հայ հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության մասին։ Ներկա ժողովածուում տեղ են գտել Վ. Բրյուսովի Սայաթ-Նովայից կատարած բոլոր թարգմանությունները և նրա արտահայտած կարծիքները հայ մեծ երգչի մասին։

Գրքում Վ. Բրյուսովի թարգմանությունները դրված են ընագրերին զուգահեռ, որը հնարավորություն է տալիս մի անգամ ևս համոզվելու, թե որքան մեծ է եղել Բրյուսով-թարգմանչի վարպետությունը։

Վերջում զետեղված է Լ. Մկրտչյանի «Վ. Բրյուսովի աշխատանքը Սայաթ-Նովայի խաղերի թարգմանությունների վրա» ուշագրավ հոդվածը։

Խ. Ս. ՍԱՐԿԻՍՅԱՆ, Սայաթ-Նովա, Հայկական ՍՍԽ ԳԱ հրատարակություն, 1963, 128 էջ։ Աշխատության մեջ հեղինակը բացահայտել է Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստի ուղի կողմերի ուժն ու հմայքը, խոր սիրո ոգի-երեզուները և դրա հետ կապված մոտիվները, ինչպես նաև ցույց տվել բանաստեղծի անպատասխան սիրո, հոգեկան ապրումների առաջնությունը ժամանակի հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ։ Նվաճելով բանաստեղծական խոսքի գագաթները, հասնելով կյանքի խոր ճանաչողության և իրականության փիլիսոփայական գնահատության, Սայաթ-Նովան ունեցել է նաև իր անձնական մեծ ողբերգությունը։ Աշխատության մեջ հայ հանճարեղ բանաստեղծը բնութագրվել է ոչ միայն որպես սիրո անզուգական երգիչ, այլև իրականության, հասարակական-քաղաքական կյանքի արատավոր կողմերի ու անարդարության խարազան։ Գանուն ճշմարտության, ազնվության և առաքինի բարքերի։

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակումբներ, Հայկական ՍՍԽ ԳԱ հրատարակություն, 1963, 84 էջ։ Ուսումնասիրությունը բաղկացած է «Սայաթ-Նովան և ժողովրդական բանավեստը», «Սայաթ-Նովայի օգտագործած ժողովրդական առածները», «Սայաթ-Նովան և արևելյան վիսպալիսարներ», «Սայաթ-Նովան հայկական ավանդություններում» գլուխներից։ Հեղինակը համոզիչ փաստերով ապացուցում է, որ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը անբաղկատելի է կապված է եղել ժողովրդական բանահյուսության հետ։ Մի շարք զուգահեռներ անցկացնելով Սայաթ-Նովայի ստեղծագործության և բանահյուսության համապատասխան նմուշների միջև, նա ապացուցում է, որ գուսան-բանաստեղծն օգտագործել է ժողովրդական ստեղծագործությունը, հայ ժողովրդական ու ընդհանրապես արևելյան բանահյուսության գոհար-

ներու Աշխատության մեջ գույց է տրված, թե ինչ նշանակություն է ունեցել ժողովրդական բանահյուսությունը Սայաթ-Նովայի ստեղծագործության համար:

Պ. Լ. ԼՐՈՒՐԱԳՅԱՆ, Սայաթ-Նովան րստ վրացական աղբյուրների (բանասիրական պրոպոսիցիան և նյութեր), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, 122 էջ: Հեղինակը համառոտակի ներկայացնում է վրաց սայաթ-նովագիտության պատմությունը, ձևագրական աշխատություններում է Սայաթ-Նովայի և նրա հետ շփոթվող մյուս Ստեփանոսների հարցը, զննատամ վրաց գրականությանը հայ մեծ բանաստեղծի մատուցած ծառաությունը: Առանձնապես արժեքավոր է վրացական աղբյուրների հայերեն թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով, որ կատարել է Պ. Մուրադյանը, հայ ընթերցողին մատուցելով Սայաթ-Նովայի կենսագրությանը վերաբերող նոր նյութեր:

Ա. Կ. ՔՈՉՈՅԱՆ, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բնագրեր, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, 200 էջ: Ընդգրկում է Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բոլոր բաները, բառակազմությունները, արտահայտությունները, ոճերն ու դարձվածքները, բաների կոնկրետ նշանակությունը տվյալ խոսքի մեջ: Հիմք ունենալով 1959 թ. Մ. Հասրաթյանի աշխատասիրությանը լույս տեսնող Սայաթ-Նովայի հայերեն 68 խաղերը, հեղինակը նրանցից բաղել է 2050 բառ, որոնցից 1035-ը հայերեն, մնացածը «փոխառյալ», «օտարաբան» և այլն, ու տվել դրանց մանրակրկիտ բացատրություններ:

Սայաթ-Նովա, հայերեն, վրացերեն, աղբյուրներ, խաղերի ժողովածու, Հայպետհրատ, սրբան, 1963, 343 էջ: Ժողովածուն կազմել, խմբագրել և ծանոթագրել է Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը, որի գրչին է պատկանում նաև «Սայաթ-Նովա» խորագրով հանգամանալից կենսագրական ակնարկը: Գրքում զետեղված են երգչի 68 հայերեն, 32 վրացերեն և 81 աղբյուրների խաղերը: Ժողովածուն ունի նաև լիբրետոգրաֆիա: ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, երգի հանձնադր. Սայաթ-Նովա, Հայպետհրատ, սրբան, 1953, 197 էջ: Նվիրված է մեծանուն հայ թյառերգուի կյանքի և ստեղծագործության մի շարք հարցերի լուսարանմանը: Հեղինակը Սայաթ-Նովա ին դիտում է երևույթների պատմական զարգացման ընթացքի մեջ, ուշադրության առարկա դարձնելով դարաշրջանի արտացո-

լումը նրա խաղերում: Աշխատության մեջ բացահայտված է Սայաթ-Նովայի դերը և նշանակությունը Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը դարձնելու գործում:

«Սայաթ-Նովա» (գիտական աշխատությունների ժողովածու), Հայպետհրատ, սրբան, 1963, 224 էջ: Ժողովածուն պատրաստված է Ն. Լանի հ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում: Նրանում ընդգրկված են Մ. Հասրաթյանի «Սայաթ-Նովա», Ա. Ղարիբյանի «Թրիլիսիի բարբառը Սայաթ-Նովայի երգերում», Յ. Բրուսյանի «Սայաթ-Նովան և երաժշտությունը», Ա. Մկրտչյանի «Սայաթ-Նովայի պոեզիան», Մ. Նարյանի «Ապոլլոն-Կարապետ-Շախաթ ի», Ա. Բաղդասարյանի «Բանաստեղծի խոհերն ու դասերը», Կ. Դուրգարյանի «Սայաթ-Նովայի ոճն ու լեզուն», Ս. Պետրոսյանի «Արևելքի և Արևմտքի երկնքանգ զույններով» ուսումնասիրություններն ու հոդվածները: Ժողովածուն հրատարակության է պատրաստել խմբագրական կոլեգիան՝ պրոֆ. Վ. Պարտիզոնու գլխավորությամբ:

ՀԱՐՈՒՐ ԼՐՈՒՐԱԳՅԱՆ, Սայաթ-Նովա, Հայկական ՍՍՌ «Գիտելիք» ընկերության հրատարակություն, սրբան, 1963, 73 էջ: Հեղինակը մեծ երգչի կյանքն ու ստեղծագործությունը քննարկում է առանձին-առանձին: Այստեղ ընթերցողը կգտնի ուշագրավ տեղեկություններ Սայաթ-Նովայի կյանքի մասին, նրա մի քանի խաղերի խնդրատիպ մեկնաբանություններ:

Սայաթ-Նովա, տեղեկատու-լիբրետոգրաֆիկ ժողովածու, Հայկական ՍՍՌ Ա. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանի հրատարակություն, կազմող՝ Ա. Շահազիզյան: Ժողովածուում զետեղված է Սայաթ-Նովա խորագրով համառոտ ակնարկը, բերված են քաղվածքներ գրականության և կուլտուրայի աշխատավոր գործիչների ասույթներից, ընտրված են մարգարիտներ Սայաթ-Նովայի խաղերից, որոնք աֆորիզմների բնույթ ունեն: Կաղմողը ծաղկաբաղ է կատարել Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ե. Չարենցի, Հ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Ս. Տարոնցու, Ի. Գրիշալիլու, Ս. Չիրովանու, Ի. Նանեշվիլու, Ջ. Նովրուզովի, Մ. Ռահիմի՝ Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծություններից: Ժողովածուն ունի նաև «Մի քանի տեղեկություններ», «Գրա՝անության ցանկ», «Ծագահանդեսի պլան» և «Թեմաներ» բաժիններ:

Կ. ՏԻՐԱՆՅԱՆ